



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N \_\_\_\_\_

\_\_\_\_\_ 2012 թ.

Քաղաքացի Աշխեն Մարգարյանին

հասցե՝ Վայոց Ձորի մարզ,  
ք.Եղեգնաձոր, Սևակի 5

Կից ուղարկվում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 03.04.2012թ. թիվ 12/2 որոշումը:

Առդիր՝ 2 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման  
հանձնաժողովի նախագահ ժ/պ՝

Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 12/2

3 ապրիլի 2012թ.

Քննարկվեց քաղաքացի Աշխեն Մարգարյանի 23.03.2012թ-ին « վարչապետին հասցեագրված գանգատը « ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 21.03.2012թ. հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410412 վարչական ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ « ԿԱ ՊԵԿ աշխատակիցների կողմից 19.03.2012թ-ին կազմվել է թիվ 1410412 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է, որ քաղաքացի Աշխեն Մարգարյանն առանց պետական գրանցման Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի Սևակի 5 հասցեում շուրջ 3 տարի միայնակ զբաղվել է հրուշակեղենի արտադրությամբ և իրացմամբ: Հիմնվելով քաղաքացի Աշխեն Մարգարյանի գրավոր բացատրության վրա ապօրինի գործունեության արդյունքում համապատասխան ժամանակահատվածում գործունեության իրացման շրջանառությունը հաշվարկվում է հետևյալ կերպ՝ 3 տարի x 12 ամից x 9000 դրամ, և կազմում է 324000 դրամ:

Սույն խախտումն առաջացնում է պատասխանատվություն համաձայն «Հարկերի մասին» « օրենքի 26-րդ հոդվածի և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» « օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթների:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» « օրենքի 29-րդ հոդվածի դրույթներով « ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 31-րդ բաժնի պետը 21.03.2012թ-ին ընդունել է թիվ 1410412 վարչական ակտը (այսուհետ նաև վարչական ակտ), որով կիրառվել են «Հարկերի մասին» « օրենքի 26-րդ հոդվածի և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» « օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված պատասխանատվության միջոցները: Արդյունքում վարչական ակտով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 260 000 դրամ, այդ թվում՝ «Հարկերի մասին» « օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված տուգանք 200 000 դրամ, «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» « օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված տուգանք 60 000 դրամ:

Քաղաքացի Աշխեն Մարգարյանի « վարչապետին հասցեագրված գանգատում մասնավորապես նշված է.

Վեց տարի է, որ դարձել եմ երկրորդ կարգի հաշմանդամ (չունեմ ոտք, տեղաշարժվում եմ սայլակով): Հաշմանդամ դառնալուց հետո ամուսնալուծվել եմ և չունեմ ոչինչ, ապրում եմ ուրիշի տանը: Գոյությունս պահելու համար (հաց, ջուր, դեղ,,,) մի քանի կտոր խմորեղեն եմ թխում:

Հիվանդ կին եմ, 11 անգամ ծանր վիրահատություն տարած: Հոգնել եմ կյանքից, խնդիրներս շատ են, չունեմ ինձ սատար կանգնող մարդիկ (հայր, եղբայր, որդի): Այսօր, հարկային դաշտն ինձ ստիպում է, որ գրանցվեմ, չգրանցված լինելու պատճառով ակտ են կազմել:

Չնայած դրան, ելնելով իմ կարգավիճակից, կառավարությունից ոչինչ չեմ ստացել և չեմ էլ ուզում: Միայն խնդրում եմ, ի սեր աստծո, թույլ տաք, ես իմ անկյունում նստած գլուխս պահեմ, դժվար օրերս անցկացնեմ, սրա-նրա դուռը չթակեմ հաց ողորմամբ: Ոչ ֆիզիկապես, ոչ ֆինանսապես չեմ կարողանա գրանցվել, դժվար է ինձ համար այս վիճակով աշխատել, որ ապրեմ (թոշակս կազմում 17.300 դրամ է վերջին երկու ամսում): Ինչու պետությունը չի օժանդակում նման կարգավիճակում գտնվող մարդկանց, որ աշխատեն: Կառավարության թե՛ գծի ինտերնետային հասցեին նամակ եմ ուղարկել մեկ ամիս առաջ և պատասխան չեմ ստացել: Ստիպված ուղարկում եմ այս նամակը և խնդրում ցուցաբերել անմիջական օգնություն հարկային դաշտից և կազմված ակտից ազատելու համար:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով վերոգրյալ արձանագրությունը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստրկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ վարչական ակտը ենթակա է չեղյալ համարման հետևյալ պատճառարանությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» « օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն. «Վարչական ակտը պետք է պարունակի՝

ա) վարույթն իրականացրած վարչական մարմնի լրիվ անվանումը.

բ) վարչական ակտի հասցեատիրոջ անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը.

գ) ակտի լրիվ անվանումը, դրա ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը եւ համարը.

դ) ակտով լուծվող հարցի նկարագրությունը (նկարագրական մաս).

ե) ակտի ընդունման հիմնավորումը (պատճառաբանական մաս).

զ) ընդունված որոշման շարադրանքը (եզրափակիչ մաս).

է) ակտի գործողության ժամկետը, եթե ակտն ընդունվում է որոշակի ժամկետով.

ը) ակտի բողոքարկման ժամկետը եւ մարմինը, ներառյալ՝ դատարանը, որին կարող է այդ ակտը բողոքարկվել.

թ) ակտն ընդունող վարչական մարմնի պաշտոնատար անձի պաշտոնը, անունը եւ ազգանունը, նրա ստորագրությունը.

ժ) ակտն ընդունած վարչական մարմնի պաշտոնական կնիքը>:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-րդ կետի համաձայն. <Գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական եւ իրավական հիմքերը: Վարչական մարմնի հայեցողական լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված վարչական ակտի հիմնավորումից պետք է պարզ լինեն այն նկատառումները, որոնց հիման վրա վարչական մարմինն ընտրել է տվյալ լուծումը>:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕԿՎ 21.03.2012թ. հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410412 վարչական ակտը, արձանագրեց, որ այն կազմված է <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ կետով և 57-րդ հոդվածի 1-րդ կետով նախատեսված պահանջների խախտմամբ: Մասնավորապես.

- վարչական ակտի <Խախտման նկարագրությունը> բաժնում ընդամենը նշված են պատասխանատվության կիրառման հիմքերը: Այսինքն, վարչական ակտը չի պարունակում հիմնավորում, նշված չեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական եւ իրավական հիմքերը: Խախտման նկարագրությունը, որի համար վարչական ակտով առաջադրվել են լրացուցիչ պարտավորություններ, բացակայում է,

- վարչական ակտում նշված է այն ընդունող պաշտոնատար անձի պաշտոնը, անունը և ազգանունը: Սակայն, վարչական ակտում բացակայում է այն ընդունած պաշտոնատար անձի ստորագրությունը,

- վարչական ակտը կնքված չէ ակտն ընդունած վարչական մարմնի պաշտոնական կնիքով:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետեւանքով.>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕԿՎ 21.03.2012թ. հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410412 վարչական ակտը:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝



Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ